

**ՈՐՈՇՈՒՄ**

27 հոկտեմբերի 2017, № 19/1

**2017թ-ի ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ «ՇՊՀ-Ի ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԿՇԻՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 14/1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

2017թ.-ի հոկտեմբերի 26-ի ռեկտորատի առաջարկների հիման վրա ՇՊՀ-ի գիտական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Միասնական մոտեցում ցուցաբերել ստուգման հասկացությունների վերաբերյալ և հետագայում սահմանել ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների վերահսկման ու գնահատման հետևյալ ձևերի անվանումները.
  - Ընթացիկ ստուգում
  - Միջանկյալ ստուգում
  - Ամփոփիչ / հանրագումարային /ստուգում:
2. Գնահատման բաղադրիչներից ակտիվությունը հաշվարկել գնահատված ընթացիկ ստուգումների (գրավոր, բանավոր` միտված դասընթացի վերջնարդյունքներին) միջին թվաբանականով: Վերջիններս գրառել մատյանում և դրանց թիվը որոշել վերջնարդյունքների քանակով:
3. Ընթացիկ ստուգման վերահանձնում չի թույլատրվում:  
Ընթացիկ ստուգումից հարգելի պատճառով բացակայության դեպքում մինչև հաջորդ ստուգումը թույլատրվում է հանձնելու նախորդը:
4. Դասընթացը, որի լսարանային ժամաքանակը 64 և ավելի է, համարել միջանկյալ ստուգումներով ավարտվող 3 գործոնով դասընթաց և «ստուգում 1», «ստուգում 2» տերմինները փոխարինել «միջանկյալ ստուգում 1», «միջանկյալ ստուգում 2» տերմիններով: Այս դեպքում արդյունարար գնահատականը ձևավորվում է ըստ հետևյալ բանաձևի.  
$$\text{արդյուն. գն.} = \text{«ակտիվ. գն.»} * 0.4 + \text{«միջ. ստուգ. 1 գն.»} * 0.3 + \text{«միջ. ստուգ. 2 գն.»} * 0.3$$
  
Դասընթացը, որի լսարանային ժամաքանակը 64-ից պակաս է, համարել ամփոփիչ ստուգմամբ ավարտվող 2 գործոնով դասընթաց: Այս դեպքում արդյունարար գնահատականը ձևավորվում է ըստ հետևյալ բանաձևի.  
$$\text{արդյուն. գն.} = \text{«ակտիվ. գն.»} * 0.4 + \text{«ամփոփիչ ստուգ. գն.»} * 0.6$$
5. Եթե ուսանողի արդյունարար գնահատականը 40 և ավելի է, ապա ուսանողը ստանում է համապատասխան կրեդիտը` առանց վերահանձման հնարավորության, իսկ եթե այն 40-ից պակաս է, ապա ուսանողը վերահանձնում է կամ ամփոփիչ ստուգումը (2 գործոնի դեպքում) կամ համապատասխան միջանկյալ ստուգում /ներ/ը (3 գործոնի դեպքում):
6. Արդյունարար գնահատականը հաշվելիս վերահանձնված ստուգման միավորը փոխարինում է համապատասխան միավորին:

